

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՔՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/33**

ք. Երևան

30.10.2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և համատեղ գործունեության պայմանագրով (Այսուհետ Կոնսորցիումով) հանդես եկող հետևյալ կազմակերպությունների՝ <<Լիլանարմ>> ՍՊԸ-ի, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Օհանյանի, <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի ի դեմս ընկերության տնօրեն Ե. Գևորգյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի N 120 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և առկա ֆինանսական միջոցների շրջանակում՝ կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.12.2015 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված, առկա ֆինանսական միջոցների շրջանակում, առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ՝ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն՝ ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 674000000 (Վեց հարյուր յոթանասուչորս միլիոն) ՀՀ դրամ, որից 112333333 (Հարյուր տասներկու միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.2 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Կապալառուի կողմից՝ N 1 Հավելվածով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 21061400 (Քսանմեկ միլիոն վաթսուներեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ պայմանագրային գումար):

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

5.1.3 Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2015 թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Կոնսորցիումի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի

կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 <<Լիլանարմ>> ՍՊԸ-ի և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի կողմից սույն պայմանագրի կատարման շրջանակներում համատեղ գործունեություն իրականացնելիս ընդհանուր գործերը վարում է <<Լիլանարմ>> ՍՊԸ-ն՝ համաձայն կողմերի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011002558, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի




Կ Ա Տ Ա Ր ՈՂ

<<Լիլանարմ>> ՍՊԸ

Ք. Երևան, Նուբարաշեն 12 փ., 4 շ., բն. 6,
<<Հայքիզնեսբանկ>> ՓԲԸ,
Հ/Հ 1150001113650100, ՀՎՀՀ 00433589


Տնօրեն՝ Հ. Օհանյան



<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ

Ք. Երևան, Նուբարաշեն 11 փ., 21 շ., բն. 2,
<<ԱՌԵՎՍԻՍԲԱՆԿ-ԳԱԶԴՐՈՍԲԱՆԿԻ
ԽՈՒՄԲ>> ՓԲԸ,
Հ/Հ 2380021486700100, ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝ Ե. Գևորգյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևանի N 120 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների կատարման

Քաղաքի 1-1 /Մասնաշենք 1/			Քանդման և մաքրման աշխատանքներ			
N	Աշխ-րի և ծախսերի շիֆրը	Աշխատանքների անվանումը	չ.մ.	Քանակ	Միավորի արժեքը հազ. դրամ	Ընդհանուրը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
1. Տանիք						
1	8--186	Ջրահեռացման խողովակների քանդում	100 գծ.մ	0.34	0.11	0.03685
2	12--178 գ-0,2	4 շերտ ուղեբերիկից շերտի քանդում	100 քառ.մ	8.45	2.05	17.3225
3	12-299 գ-0,8	Ցեմենտյա հարթեցնող շերտի քանդում	100 քառ.մ	8.45	14.4	121.68
4	12--287 գ-0,8	Վերնածածկի վրա թեթև բետոնե ջերմամեկուսիչ շերտի քանդում	խոր.մ	185.90	3.44	639.496
5	12--289 գ-0,6	Գոլորշամեկուսիչ շերտի քանդում	քառ.մ	845.00	0.16	135.2
Ընդամենը						913.73535
2. Ծածկ						
6	46--82	Դիաֆորացմաների տեղերում ե/թ հավաքովի ծածկերի քանդում	խոր.մ	5.20	24.24	126.048
Ընդամենը						126.048
3. Միջնորմներ						
7	46--88	Թեթև բետոնե սալերից միջնորմների քանդում 100մմ հաստ	քառ.մ	927.21	0.86	797.4006
Ընդամենը						797.4006
4. Պատուհաններ						
8	46--122 օգտ	Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ միասին	քառ.մ	345.51	2.1	725.571
Ընդամենը						725.571
5. Դռներ						
9	46--124	Փայտից դռների քանդում	քառ.մ	145.26	1.23	178.67
10	9--34 գ-0,6 կիրառելի	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում	քառ.մ	8.10	3.6	29.16
11	9--34 գ-0,6	Մետաղական դռների ապամոնտաժում	քառ.մ	7.56	3.6	27.216
Ընդամենը						235.0458
6. Հատակներ						
12	46-119	Ցեմենտե հարթեցնող շերտի քանդում	100 քառ.մ	13.67	37.96	518.91
13	49-99	Բետոնե նախապատրաստական շերտի քանդում	խոր.մ	54.60	16.59	905.81
14	46--109	Խեցեգործական սալիկներից հատակների քանդում	100 քառ.մ	1.63	44.99	73.33
15	46--121	Գորգահատակի քանդում	100 քառ.մ	1.23	15.39	18.93
16	46--121	Լինոլեումի քանդում	100 քառ.մ	1.21	15.39	18.62
17	46--103	Մանրատախտակե հատակների քանդում	100 քառ.մ	7.56	57.07	431.45
18	46-119	Խճափատակ հատակների քանդում	100 քառ.մ	2.04	37.96	77.44
Ընդամենը						2044.50
7. Ներքին հարդարում						
19	n11--227 կիրառելի	Սյուների և պարզունակների վրայից սվաղի քանդում	քառ.մ	1050	0.83	871.50
20	n11--229	Նույնը առաստաղի համար	քառ.մ	1367	1.06	1449.02
21	13--5	Պատերի վրայից խեցե սալիկների քանդում	քառ.մ	104.4	0.62	64.73
Ընդամենը						2385.25
8. Ներքին և արտաքին աստիճաններ						
22	9--26 n	Մետաղական բազրիքների ապամոնտաժում	գծ.մ	27.8	0.49	13.62
23	46--131	Բազալտե արտաքին աստիճանաքայլերի ապամոնտաժում	գծ.մ	69	1.31	90.39
24	46--76	Խամբարբետոնե արտաքին աստիճանների հիմքերի զանգվածի քանդում	խոր.մ	41	11.91	488.31
Ընդամենը						592.32
9. Այլ աշխատանքներ						
25	1-1587	Էքսկավատորով շինարարական աղբի բարձում ավտոմեքենայի վրա 0,65խոր.մ շերտակի տարողությամբ	1000 խոր.մ	0.48	480.85	231.77
26	C310-12	Շին աղբի տեղափոխում 12կմ	տ	868.00	2.49	2161.32
27	1-1605	Աշխատանք աղբակույտի վրա	1000 խոր.մ	0.48	39.51	19.04

		Ընդամենը				2412.13
		Ընդհանուրը				10232.00
		Հաշվարկ 1-2 /Սասնաշենք 1/			Ամրագման և վերականգնման աշխատանքներ	
N	Աշխ-րի և ծախսերի շիջորդ	Աշխատանքների անվանումը	չ.մ.	Քանակ	Միավորի արժեքը հազ. դրամ	Ընդհանուրը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		1. Հողային աշխատանքներ				
1	1-961	Բնահողի մշակում ձեռքով մինչև 20մ տեղափոխումով /հիմնային գոտիի համար/	100 խոր.մ	0.06	228	13.67
2	1-961	Բնահողի մշակում ձեռքով մինչև 20մ տեղափոխումով /դիվանագմանների համար/	100 խոր.մ	0.92	228	209.64
3	1-1587	Ավելորդ բնահողի բարձում մեխանիզմով ավտոմեքենայի վրա	1000 խոր.մ	0.037	480.85	17.79
4	310-12	Տեղափոխում մինչև 12կմ	տ	66.60	2	165.83
5	1-968	Բնահողի հետիցք ձեռքով տեղափոխելով 20մ	100 խոր.մ	0.55	95.29	52.41
6	1-1184	Բնահողի տոփանում պնևմատոփանով	100 խոր.մ	0.55	23.09	12.70
		Ընդամենը				472.05
		2. Հիմքեր				
7	6-1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-7,5 դասի բետոնից	խոր.մ	2	26.77	53.54
8	6--168	Ե/բ հիմնային գոտու իրականացում B-25դասի բետոնով	խոր.մ	3.00	64.02	192.06
9		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.200	344.4	68.88
10		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.462	344.4	159.11
11	6--14	Բուտարետոնե հիմքերի իրականացում B-12,5 դասի բետոնով	խոր.մ	16.00	36.63	586.08
		Ընդամենը				1059.67
		3. Պատեր				
12	15--10 15--59 տեխ մաս կետ 1,5	Որմնախարսիսի երեսապատում 30մմ հաստ բազալտե սալիկներով 7,7-(0,08*7), 0,15-(0,005*7), 10,2-(0,15*7),/ներառյալ աստիճանների և թեքահարթակների կողային մասերը/	քառ.մ	91.50	22.61	2068.82
13		Ցանցի ձգում պատերի վրա ՅՎո-1	տ	0.23	635.32	145.49
14	15--20 15--60 տեխ մաս կետ 1,5	Պատում բացվածքների երեսապատման Արթիկի քարհանքի տուֆե սալիկներով, հաստ 3սմ 5,8-(0,06*7), 0,13-(0,005*7), 8,9-(0,11*7),	քառ.մ	24.33	15.71	382.22
15		Ցանցի ձգում պատերի վրա ՅՎո-1	տ	0.03	635.32	18.61
16	6-145	Ե/բ պատի իրականացում B-25դասի բետոնով	խոր.մ	104.50	87.04	9095.68
17		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	1.801	344.40	620.26
18		A-500c դասի ամրանի արժեքը	տ	16.189	344.40	5575.49
19		Պողպատ	տ	0.312	546.18	170.41
20	6-145	Ե/բ օղափոխության հորանների իրականացում B-15դասի բետոնով	խոր.մ	8.00	78.88	631.04
21		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.560	344.40	192.86
22	46--82	Սյուների և պարզունակների ամրացման տեղերում բետոնի շերտի բանդում	խոր.մ	2.880	24.24	69.81
23	7--334	Պարզունակների միացման հանգույցների ամրացում Վո 1 ցանցով	տ	0.013	61.11	0.79
24		Վո -1 ցանցի արժեքը	տ	0.013	651.05	8.46
25	15--256	Հանգույցների սվաղ ցեմ ավազե շաղախով	քառ.մ	20.000	4.61	92.20
26	46-15	Բացվածքների ամրացում մետաղական շրջանակներով	տ	0.129	148.75	19.19
27		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.010	344.40	3.44
28		Տաշտապառոպատի արժեքը	տ	0.111	519.71	57.69
29		Ռաբիտցա ցանցի	տ	0.008	38.66	0.31
30	15--256	Բացվածքների սվաղ ցեմ ավազե շաղախով	քառ.մ	4.500	3.34	15.03
31	8-140	Բացվածքների շարում բետոնե բլոկներով 20*20*400սմ	խոր.մ	6.72	20.04	134.67
32	8-150	Անցքերի լցափակում բետոնով B-20դասի բետոնից	խոր.մ	4.00	35.59	142.36
33	6--365 կիրառելի	Ամրանների տեղադրում բլոկների մեջ	տ	0.40	57.10	22.78
34		Վո -1 դասի ամրանի արժեքը	տ	0.03	635.32	17.15
35		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.38	344.40	131.56
36	15--256	Բլոկներ վրա սվաղ ցեմ ավազե շաղախով	քառ.մ	13.000	2.17	28.21
37	46-189	Պատերի սյուների և պարզունակների մեջ հորիզոնական անցքերի բացում d=26մմ b-300մմ	100 հատ	3.80	117.47	446.39
38	7--334	Հավաքովի ե/բ պատերի ամրացում	տ	0.008	61.10	0.49
39		Պողպատ	տ	0.008	546.18	4.37
40	23--45	Երեսապատման քարերի մեջ վերտիկալ անցքերի բացում ամաստե գայիկոնով d=20մմL-20մմ	100 հատ	25.00	14.28	357.00
41	35-37-57	Անցքերի ներարկում պոլիմեր -ցեմենտե շաղախով	խոր.մ	0.016	63.81	1.02
		Ընդամենը				20453.82
		4. Ծածկեր				
42	46-5	Ծածկի սալերի ամրացում B-25 դասի բետոնով	խոր.մ	130.00	89.88	11684.40
43		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.480	344.4	165.31
44		Լույնը, BP-I	տ	5.040	635.32	3202.01
45		A-500c դասի ամրանի արժեքը	տ	3.450	344.4	1188.18

46	11--11	Թեթև բետոնե հարթեցմող շերտի իրականացում B-12,5 դասի	խոր.մ	16.000	32.42	518.72
47	7--734	Ծածկի բացվածքների ամրացում մետաղական էլեմենտներով	տ	0.040	405.51	16.22
		Ընդամենը				16774.85
		5. Տանիք				
48	10-70	Տանիքի փայտե կարկասի էլեմենտների տեղադրում /ծպեղնառուք, մարդակ, պարկուկ, կանգնակ, քեքան, ծայրա կցորդ, լրաց. տախտակ, ձգան, շարենգ, ֆերմա, որմնափայտ, լրացուց. հենարան/	խոր.մ	28.83	211.28	6091.20
49	10-201	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խոր.մ	28.83	10.31	297.24
50	12-299 12--300	Ցեմենտյա հարթեցմող շերտի իրականացում 30մմ հաստ	100 քառ.մ	8.23	123.66	1017.72
51	12-289	Գոլշամենկուսացման իրականացում տողով բիտումի քսուկի վրա, 1 շերտ	100 քառ.մ	8.23	115.50	950.57
52	12-288-1	Ծածկի ջերմամեկուսացում խարամով, 30մմ հաստությ.	խոր.մ	246.90	6.94	1713.49
53	12--404	Տանիքի ծածկի իրականացում ձևավոր գործարանային ներկածածկությամբ քիթեղից 0,5մմ հաստ, փայտե կավարամածի պատրաստումով	100 քառ.մ	8.22	793.94	6526.19
54	12-280	Գործարանային ներկածածկությամբ 0,5մմ հաստ քիթեղից փոքր ծածկությունների իրականացում/քիթեղե զոգնոցներ/	100 քառ.մ	0.32	352.40	112.77
55	12-278	Պատերի վրա ջրահեռացման առուների պատրաստում գործարանային պայմաններում ներկված քիթեղից 0,5մմ հաստ	100 զծ.մ	1.77	1297.25	2296.13
56	12-283	Կտուրի մետաղական բազրիկների տեղադրում	զծ.մ	68.00	1.83	124.44
57	9-46	Մետաղական հակահրդեհային ՄԱ-1,5 սանդուղքների տեղադրում	տ	0.176	139.19	24.50
58		Մետաղական սանդուղքների արժեքը	տ	0.176	546.11	96.12
59	10-71	Չեղմահարկի պատուհանների տեղադրում	հաստ	6.00	105.64	633.84
60	9-46	Մետաղական սանդուղքների տեղադրում դեպի կտուր	տ	0.552	139.19	76.83
61		Մետաղական սանդուղքների արժեքը	տ	0.552	546.11	301.45
62	9--118	Կտուրի մտոցի մետաղական դռան տեղադրում /ջերմամեկուսացված /	տ	0.04	91.35	3.20
63		Կտուրի մտոցի մետաղական ջերմամեկուսացված դռան արժեքը	քառ.մ	1.20	39.63	47.56
64	15-614	Մետաղական աստիճանների յուղաներկում 2 անգամ	100 քառ.մ	1.12	102.05	114.30
65	12-276	Ընքի ծակատի եզրակալում գործարանային ներկածածկությամբ քիթեղից, այդ թվում /ջրիոս խողովակների, պատուհանագոգերը և այլն	100 քառ.մ ծակատ	10.16	81.13	824.28
		Ընդամենը				21251.81
		7. Միջնորմներ				
66	8-169	Թեթև բետոնե սալերից միջնորմների իրականացում 10սմ հաստ	100 քառ.մ	3.65	289.84	1059.08
67	8-140	Միջնորմների շարում քեթև բետոնե բլոկներով 20152/0,016 *20*40սմ	խոր.մ	57.50	20.04	1152.30
68	8-150	Անցքերի լցափակում քեթև բետոնով B 15դասի	խոր.մ	20.13	25.91	521.57
69		Սանհանգույցներում մետաղապլաստե էլեմենտներից միջնորմների տեղադրում	քառ.մ	18.27	21.72	396.82
70	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում	տ	1.23	807.16	988.77
71	8-59	Շաղվածքի ամրանավորում ցանցով	տ	0.34	464.72	158.00
72	7-338	Ռետիկնե կողադիրների տեղադրում	քառ.մ	24.50	12.16	297.92
73	6--170	Ե/բ բարավորների իրականացում B15դասի բետոնով	խոր.մ	2.00	71.53	143.06
74		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.144	344.40	49.59
75		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.240	344.40	82.66
		Ընդամենը				4849.77
		8. Պատուհաններ				
76		Մետաղապլաստե պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, բացվող /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	183.68	23.59	4333.01
77		Մետաղապլաստե պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, չբացվող /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	147.07	16.15	2375.18
78	10--103	Պլաստմասից պատուհանագոգեր 0,25սմ լայնությ	քառ.մ	330.75	3.22	1065.02
		Ընդամենը				7773.21
		9. Ցոցափեղկեր				
79		Մետաղապլաստե ցոցափեղկեր երկտակ ապակեփաթեթով, չբացվող /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	27.63	16.15	446.22
		Ընդամենը				446.22
		10. Դռներ				
80		Մետաղապլաստե դռների /տեղադրումը, տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/	քառ.մ	13.97	30.60	427.48
81		Ալյումինե դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60սմ պրոֆիլով /տեղադրումը, տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/	քառ.մ	15.12	53.55	809.68

82		Այլումինե դռների տեղադրում առանց ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/	քառ.մ	11.79	35.70	420.90
83	9--34	Մետաղական հակահրդեհային դռան տեղադրում	քառ.մ	14.07	69.24	974.21
84	10-105	Փայտյա կարկասով ապակեպատ 8մմ հաստ ՄՊՖ-ով երեսապատծ, դռների տեղադրում փականների հետ միասին	քառ.մ	108.57	53.58	5817.18
		Ընդամենը				8449.45
		11. Պատակներ				
85	11--3 11--5	Կուլմավազե նախապատրաստական շերտի իրականացում 200մմ 40% ավազ 60% կուպիճ/դիաֆրագմաների տեղերում/	խոր.մ	18.24	5.42	98.86
86	11-11	Պատակների տակ բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-12,5 դասի բետոնից 10սմ հաստ/դիաֆրագմաների տեղերում/	խոր.մ	9.12	33.19	302.69
87	11-55	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստությ.	100 քառ.մ	15.92	89.55	1425.64
88	11-55 11--56	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությ.	100 քառ.մ	8.28	124.70	1032.52
89	11-18	Բիտումի քսուկի վրա տողով քրամեկուսացման իրականացում 1 շերտ	100 քառ.մ	2.49	328.73	818.87
90	11-135	Պատակի պատում խեցեգործական սալիկներով սան.հանգույցներում 30*30մմ	100 քառ.մ	2.49	599.09	1492.33
91	11--205	Հետերագեն ՊՎԲ 4,5մմ հաստ 1մմ պաշտպ շերտ լավորակ որակյալ լինոլեումե ծածկույթի իրականացում տսմնի հետ միասին/տեղափոխումը,տեղադրումը ներառված ք գնի մեջ/	100 քառ.մ	1.0319	1298.29	1339.71
92	11--205	2մմ հաստ լավորակ լինոլեումե հատակի ծածկույթի իրականացում /ՊՎԲ-2մմ/0,7մմ պաշտպանիչ շերտով	100 քառ.մ	1.28	1017.45	1302.34
93	11--187 օգտ	Երբատախտակե շերտի իրականացում 20մմ հաստ	քառ.մ	607.00	5.77	3502.39
94	11--198	Մանրատախտակե հատակի ծածկույթի իրականացում հաճախե 15մմ հաստ	քառ.մ	607.00	7.37	4473.59
95	11--198	Լավորակ լամինատե հատակի ծածկույթի իրականացում 8մմ հաստ շրջակներ և սպունգի հետ միասին	քառ.մ	99.11	7.77	770.08
96	11--69	Պատակի ցեմենտե ծածկույթի իրականացում	քառ.մ	828.00	1.07	885.96
97	11--77	Ցեմ ծածկույթի երկաթայնացում	քառ.մ	828.00	0.1900	157.32
98	11--135 կիրառ	Պատակի ծածկույթի իրականացում լավորակ փայլատ մամլագրամիտե սալիկներով 600*600մմ	քառ.մ	157.10	15.55	2442.91
99	11--252	Շրջակների իրականացում լավորակ մամլագրամիտե սալիկներով h-10սմ	100 գծ.մ	1.68	199.47	335.11
		Ընդամենը				20380.31
		12. Ներքին հարդարում				
100	15-246-1	Պատերի և սյուների լավորակ սվաղ գաջով	100 քառ.մ	17.88	210.30	3760.16
101	15-247-1	Առաստաղի և հեծանների լավորակ սվաղ գաջով	100 քառ.մ	15.52	251.27	3899.71
102	15-277-1	Լույնը, դռների և պատուհանների շեպությունների համար	100 քառ.մ	0.75	497.97	373.48
103	15-256	Սան.հանգույցների և նկուղի պատերի լավորակ սվաղ ցեմ.-ավազ. շաղախով	100 քառ.մ	12.82	176.33	2260.55
104	15-257	Լույնը,առաստաղների համար	100 քառ.մ	8.65	180.11	1557.95
105	34--388	Պատերի երեսապատման մետաղական կարկասի պատրաստում	քառ.մ	479.22	4.16	1993.56
106	34--389	Պատերի երեսապատման գիպսատվարաթթով	քառ.մ	425.07	6.94	2949.99
107	34--389	Պատերի երեսապատման գիպսատվարաթթով սան.հանգույցներում	քառ.մ	54.15	7.40	400.71
108	15-660	Պատերի,սյուների և շեպությունների լավորակ ներկում լատեքսաներկով	100 քառ.մ	18.54	107.43	1991.75
109	15-661	Առաստաղների և հեծանների լավ որակ ներկում լատեքսաներկով	100 քառ.մ	15.52	120.50	1870.16
110	15--568	Պատերի յուղաներկում 2 անգամ լավորակ յուղաներկով	100 քառ.մ	5.56	95.67	531.93
111	15-84	Սան.հանգույցներում պատերի երեսապատում խեցեպալիկներով	100 քառ.մ	4.78	653.92	3125.74
112	34-389	Սան.հանգույցներում և ցնցուղարաններում պլաստմասե շերտածողներով կախովի առաստաղի իրականացում, հիմնակմախքի պատրաստումով	քառ.մ	96.70	10.37	1002.78
113	15-563	Շրիշակների յուղաներկում 2 անգամ	100 քառ.մ	0.11	103.88	11.43
		Ընդամենը				25729.89
		13. Արտաքին հարդարում				
114	15-304	Հորանների պատերի վրա գանցի ձգում	քառ.մ	23.30	1.92	44.74
115	15--201	Հորանների պատերի դեկորատիվ սվաղ ցեմ ավազե շաղախով	քառ.մ	23.30	1.50	34.95
116	7--712 q-0,8	Շարքից դուրս եկած ցեմ ավազե կարանների քանդում	խոր.մ	1.44	0.18	0.26
117	7--707	Ե/բ հորիզոնական և ուղղահայաց կարանների հերմետիկացում ճկարծրացող մաստիկայով	գծ.մ	144.20	1.01	145.64

118	7--712	ճակատային կողմից հավաքովի ե/բ պատի պանելների կարաճում պոլիմերացնենտային շաղախով	զծ.մ	144.20	0.26	37.49
119	14--321	Պատերի մակերեսի մաքրում	քառ.մ	778.50	0.20	155.70
120	8-190	ճակատների հարդարման համար փայտամածի հավաքում և տեղադրում	100 քառ.մ	3.89	87.53	340.49
		Ընդամենը				759.27
		13. Արտաքին աստիճաններ				
121	6--21	Աստիճանների տակ բուտաբետոնե հիմքերի իրականացում B-12.5 դասի բետոնով	խոր.մ	80.50	32.96	2653.28
122	6--1	Բետոնե մահապատրաստական շերտի իրականացում B-15 դասի բետոնով	խոր.մ	8.00	34.96	279.68
123	7--733	Բազալտե աստիճանների տեղադրում 150*300մմ	զծ.մ	51.80	12.49	646.98
124	7-736	Արտաքին մետաղական բազրիքների տեղադրում h=90սմ	100 զծ.մ	0.764	1078.29	823.81
125	15-614	Մետաղական աստիճանների և բազրիքների լուղաներկում	100 քառ.մ	1.1240	102.05	114.70
126	11-500	Արտաքին աստիճանահարթակի և աստիճանաքայլերի պատում բազալտից սալիկներով 3սմ հաստ.	քառ.մ	58.83	15.21	894.80
		Ընդամենը				5413.26
		14. Հովհար 1				
127	n23--45	Հովհարների համար պատերում հորիզոնական անցքերի իրականացում D=16մմ L-100ՄՄ	հատ	308.00	0.28	86.24
128	9--91	Պողպատե էլեմենտների տեղադրում	տ	0.5610	77.90	43.70
129		Պողպատից էլեմենտների արժեք 60*40*3	զծ.մ	28.60	1.19	34.03
130		Պողպատից էլեմենտների արժեք 40*40*3	զծ.մ	117.00	0.95	111.15
131		Պողպատից էլեմենտների արժեք 20*20*3	զծ.մ	16.50	0.46	7.59
132		Ինքնապարուրվող պտուտակներ M16	հատ	308.00	0.15	46.20
133		Պոլիկարբոնատից հովածակ	քառ.մ	17.60	6.96	122.50
134		Պոլիկարբոնատի համար ռետինե պրոֆիլ	զծ.մ	76.80	1.05	80.64
		Ընդամենը				532.05
		Ընդհանուրը				134345.63
		Հաշվարկ 1-3 /Մասնաշենք 1/			Ներքին բնույթում	
N	Աշխ-րի և ծախսերի շիֆորը	Աշխատանքների անվանումը	չ.մ.	Քանակ	Միավորի արժեքը հազ. դրամ	Ընդհանուրը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		1. Սան. տեխ. աշխատանքներ				
1	19--5 q-0,4	Գոյություն ունեցող կաթսաների ապամոնտաժում 32կվտ	կ-տ	9.00	2.36	21.24
2	19--5	Նույնի մոնտաժում 32 կվտ	կ-տ	9.00	5.89	53.01
3	18-115	Ալյումինե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում H=500մմ 900*0,28	էկմ	252.00	0.22	55.44
4	18-115	Ալյումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում H=500մմ 903*0,28	էկմ	252.84	0.54	136.5336
5		Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը H=500մմ	սեկց	903.00	4.06	3666.18
6	18--165	Կենտրոնախույս պոմպերի տեղադրում	հատ	1.00	17.49	17.49
7		Կենտրոնախույս պոմպի արժեքը HF51B Q=12խոր.մ/ժամ H=16մ.ջ.ս. N=0,6կվտ	կ-տ	1.00	117.76	117.76
8		Կենտրոնախույս պոմպի արժեքը CP 132B Q=3,5խոր.մ/ժամ H=16մ.ջ.ս. N=0,45կվտ n=2900պ/րոպպե	կ-տ	0.00	107.56	0
9		Կենտրոնախույս պոմպի արժեքը CP100B Q=2,6խոր.մ/ժամ H=12մ.ջ.ս. N=0,0,25կվտ n=2900պ/րոպպե	կ-տ	0.00	92.85	0
10	18--184	Կեղտազտիչ d=25մմ	հատ	8.00	18.12	144.96
11	18--179	Սանրախողովակ d=80մմ L-5մ	հատ	2.00	27.52	55.04
12	19--1	Պողպատե խողովակների ապամոնտաժում	զծ.մ	1433.00	0.35	501.55
13	16--261	Ջրագազամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /ամրացումով/d=16*2,2մմ փորձարկումով	զծ.մ	153.00	2.73	417.69
14	16--261	Ջրագազամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /ամրացումով/d=20*2,8մմ փորձարկումով	զծ.մ	153.00	2.97	454.41
15	16-662	Նույնը, d=25*3,5մմ	զծ.մ	104.00	2.68	278.72
16	16-663	Նույնը, d=32*4,4մմ	զծ.մ	163.00	2.78	453.14
17	16-664	Նույնը, d=40*5,5մմ	զծ.մ	110.00	4.49	493.9
18	16-665	Նույնը, d=50*6,9մմ	զծ.մ	95.00	5.31	504.45
19	16-668	Նույնը, d=90*12,3մմ	զծ.մ	6.00	9.66	57.96
20		Խողովակների ձևավոր մասեր պոլիպրոպիլենից d=16--50մմ	հատ	480.00	0.4	192
21		Մարտկոցի աքսեսուարներ կախիչներ և դյուբելների հետ միասին	հատ	190.00	0.49	93.1
22	16--134	Ջերմակարգավորիչ կափույր RTD dy=15մմ	հատ	91.00	7.97	725.27
23	16--134	Հետադարձ զծի կափույր RLV d=15մմ	հատ	91.00	4.15	377.65
24	16--134	Բրոնզե փական dy=25մմ	հատ	24.00	4.14	99.36
25	16--135	Մետաղական սողնակների տեղադրում d=50մմ	հատ	3.00	30.7	92.1
26		Խողովակների ամրացման համար պոլիպրոպիլենե ամրակներ դյուբելների հետ միասին	հատ	246.00	0.03	7.38

27	18--229	Օդահան ծորակ մարտկոցների վրա d=8մմ	հատ	91.00	0.45	40.95
28	16-134	Դատարկման ծորակ d=15մմ	հատ	6.00	4.09	24.54
		Ընդամենը				9081.8236
		Հիդրաուրական աշխատանքներ				
29	22-144	Ջերմամեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչով d=20մմ	զծ.մ	146.00	0.75	109.5
30	22-144	Ջերմամեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչով d=25մմ	զծ.մ	99.00	0.75	74.25
31	22-144	Ջերմամեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչով d=32մմ	զծ.մ	156.00	0.8	124.8
32	22-144	Ջերմամեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչով d=40մմ	զծ.մ	103.00	0.8	82.4
33	22-144	Ջերմամեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչով d=50մմ	զծ.մ	90.00	1.03	92.7
34	22-144	Մետաղական լար	կգ	3.00	0.58	1.74
		Ընդամենը				485.39
		Ընդհանուրը				9567.2136
		Դաշվարկ 1-4 /Մասնաշենք 1/			Լեքքին օդափոխություն	
N	Աշխ-րի և ծախսերի շիջրը	Աշխատանքների անվանումը	չ.մ.	Քանակ	Միավորի արժեքը հազ դրամ	Ընդհանուրը հազ.դրամ
1	2	3	4	5	6	7
		Սան. տեխ. աշխատանքներ				
1	20--780	Կանալային RP50-25/22 -4D օդափոխության համակարգի մոնտաժում Լ-5, Լ-7 Լ-800 խոր.մ/ժամ P=310պա գտիչով, ջրային օդատաքացուցիչով, օդամղիչով և ձայնախլացուցիչով N=1440կվտ	կ-տ	2.00	61.28	122.56
2		Կանալային օդափոխության համակարգի արժեքը Լ-5,7/ RP50-25/22 -4D/	կ-տ	2.00	687.18	1374.36
3	20--780	Կանալային RP50-30/25 -4D օդափոխության համակարգի մոնտաժում Լ-6, Լ-8, Լ-9, Լ-1205 խոր.մ/ժամ P=385պա գտիչով, ջրային օդատաքացուցիչով, օդամղիչով և ձայնախլացուցիչով N=1450կվտ	կ-տ	3.00	61.28	183.84
4		Կանալային օդափոխության համակարգի արժեքը Լ-6,8,9/RP50-30/25 -4D/	կ-տ	3.00	322.07	966.21
5	20--735	<VORTING> ֆիրմայի CA 315-VO տիպի կենտրոնախույս օդամուղ Q=1020խոր.մ/ժամ H=56 մ.ջ.ս N=0,9ամպ n=2560 պտ/րոպ	կ-տ	2.00	5.14	10.28
6		<VORTING> ֆիրմայի CA 315-VO տիպի կենտրոնախույս օդամուղի արժեքը	կ-տ	2.00	116.82	233.64
7	20--735	<VORTING> ֆիրմայի CA 250-VO տիպի կենտրոնախույս օդամուղ Q=1030խոր.մ/ժամ H=58 մ.ջ.ս N=0,9ամպ n=2560 պտ/րոպ	կ-տ	2.00	5.14	10.28
8		<VORTING> ֆիրմայի CA 250-VO տիպի կենտրոնախույս օդամուղի արժեքը	կ-տ	2.00	108.52	217.04
9	20-404	Օդընդունիչ ճաղավանդակ 400*200	հատ	2.00	2.2	4.4
10	20-404	Կարգավորիչ ճաղավանդակ PII200	հատ	2.00	2.17	4.34
11	20-404	Կարգավորիչ ճաղավանդակ P200	հատ	19.00	2.17	41.23
12	20-407	Կարգավորիչ ճաղավանդակ P150	հատ	51.00	2.17	110.67
13	20-410	Օդընդունիչ և օդի արտածման ճաղավանդակ 600*200	հատ	3.00	3.54	10.62
14	20--142	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 1մմ հաստութ. P-ն մինչև 2900մմ /1300*150մմ/	քառ.մ	0.00	6.54	0
15	20--114	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 0,7մմ հաստութ. P-ն մինչև 1000 /300*200մմ/	քառ.մ	16.00	7.56	120.96
16	20--114	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 0,7մմ հաստութ. P-ն մինչև 900 /300*150մմ/	քառ.մ	96.30	7.56	728.028
17	20--114	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 0,7մմ հաստութ. P-ն մինչև 800 /300*100մմ/	քառ.մ	3.20	7.56	24.192
18	20--108	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 0,6մմ հաստութ. P-ն մինչև 600 /200*100մմ/	քառ.մ	30.00	7.56	226.8
19	20--108	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 0,6մմ հաստութ. P-ն մինչև 500 /150*100մմ/	քառ.մ	21.50	7.56	162.54
20	20--140	Ցինկապատ թիթեղից օդատարների տեղադրում 1մմ հաստութ. P-ն մինչև 1600 /600*200մմ/ ,400*200մմ/ ,400*150մմ/	քառ.մ	55.80	7.12	397.296
21	16--261	Ջրազգաձամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /ամրացումով/d=20*2,8մմ փորձարկումով	զծ.մ	23.00	2.97	68.31
22	16-662	Լույնը, d=25*3,5մմ	զծ.մ	55.00	2.68	147.4
23	16-663	Լույնը, d=32*4,4մմ	զծ.մ	25.00	2.78	69.5
24	16-664	Լույնը, d=40*5,5մմ	զծ.մ	12.00	4.49	53.88
25	16-665	Լույնը, d=50*6,9մմ	զծ.մ	14.00	5.31	74.34
